

հասկըցած, ինչպէս որ մինչեւ ցայժմ ալ կը գտնուին չհասկըցողներ, եւ կամ հասկըցերէ՛ բայց չընդունիր: Փափաքելի էր որ այս կողմանէ ալ իր միտքը բացայայտ կերպով յայտնէր մեզ. սակայն գիտեմք որ չէր կրնար՝ քանի որ պատրականութեան մէջ հաստատ մնալը գէթ առ երեսո՛ հարկ կհամարէր:

Վերջին մէկ խորհրդածութիւննիս ալ այս րլայ թէ որչափ հեռու է այս գրուածքին արիական հոգին այն վատ եւ շողոքորթ հոգիէն՝ որով երեք տարի առաջ Յայտարարութիւններ տրուեցան Հռովմայ աթոռոյն ի դի-

մաց Միխիթարեան միաբանութեան (*), եւ յայտնի ըրին գործով թէ ո՛վ որ Հռովմայ աթոռոյն հնազանդ եւ հպատակ կուզէ րլայ այնպէս՝ ինչպէս որ Հռոմ կպահանջէ, հարկ է որ վերջապէս գոլէճոց ճամբան բռնէ ու անոնց զրօշակին տակը մտնէ, ինչպէս որ այժմու Միխիթարեանք ըրին գրով, թէպէտ եւ գուցէ ոչ ամենեքեան նովին սրտով եւ անկեղծութեամբ:

(*) Ասոնց վրայ տեղն իտեղ խօսած եմք եւ տպած ի Յայտարարութեան անցից Մուրատեան վարժարանին:

Ա Ք Ա Ղ Ա Ղ Ն Ե Ր Ո Ւ Կ Ռ Ի Ի .

Անգղիացւոց հասարակ ժողովրդեան մեծ զուարճութիւններէն մէկն է աքաղաղներու կռիւր, որ արեւելք ալ մինչեւ ցայժմ շատ տեղ կգտնուի:

Աքաղաղին բնական է—ինչպէս որ իրեն քաղաքէն ու շարժմունքներէն ալ կերեւնայ—հպարտութիւն, գոռոգութիւն, տիրապետական կերպ, եւ իրարու դէմ անհաշտելի թշնամութիւն ու անտանելի նախանձ: Կռուասէր աքաղաղներուն մէկմէկու դիմաց ելլելով պատերազմած ատենը՝ անոնց կատաղութիւնը չափ ու սահման չունի: Երկուքին ալ կատարքը ծակծկուելով՝ արիւնլուայ կլինի, եւ դարձեալ չեն հանգարտիր, մինչեւ որ վերջապէս երկուքէն մէկը կյաղթուի մէկալէն, ու կձգէ կիփախշի: Այն ատեն տեսնելու բան է յաղթողին ալ գոռոգ ու ցած կատաղութիւնն որ փախչողին ետեւէն կիյնայ, ու թէ որ հասնի՝ դարձեալ ոտքին տակը կառնու իւր թշնամին ու կտուցովը ծեծելով՝ մեռցընելու աստիճան կը հասցընէ զինքը, երբեմն ալ կմեռցընէ:


Հոս գրուած պատկերին մէջ դիտելու է երկու աքաղաղի տէրերուն անհոգ նստուածքն ու հանդարտութեամբ սպասելը թէ արդեօք կռիւ ընողներուն հրը պիտի յաղթէ որ անոր տէրը խոստացուած ստակը վաստակի: Իսկ զրտէն նայողներէն ոմանք հետաքրքրութեամբ կսպասեն կռիւին վերջը տեսնելու, ոմանք պաղ կերպով կեցեր այն կռիւը կդիտեն, երկու հոգի ալ ձեռքերնին իրարու դէմ վերուցած՝ ստակ կխոստանան իրարու, մէկը պնդելով թէ այս աքաղաղը կյաղթէ, միւսը թէ ոչ՝ մէկալը:

Տարակոյս չկայ որ այսպիսի բարբարոսական զուարճութեան ետեւէ եղող մարդիկ՝ ինչ

ազգէ ալ լինին՝ իրենք զիրենք անպատիւ կրեն. վասն զի յայտնի կցուցընեն իրենց անգթութիւնն ու խստասրտութիւնը ընդդէմ կենդանեաց: Բայց ոչ ապաքէն անոնցմէ ալ աւելի անգութ եւ անողորմ բարբարոսներ են այն մարդիկն որ ժողովրդոց եւ ընտանեաց եւ մասնաւորաց մէջ կռիւ կձգեն, ու դիւական զուարճութեամբ մը կկենան նոցա մէջ պատահած վնասներուն ու գայթակղական սրտցաւութիւններուն վրայ կնային:

Չարմանալի բան. մարդիկ կան որ իրենք վախկոտ, վատ, շողոքորթ, անգոր եւ անմիտ են, բայց խաղաղասէր չեն ամենեւին. րնդ հակառակն սաստիկ կռուասէր ալ են՝ որ մէկը մէկալը իրարու դէմ կռիւի կհանեն: Ըսել է թէ իրենց խաղաղ եւ հանդարտ կեանքը՝ իրենց տկարութենէն ու վատութենէն է, եւ ոչ թէ խաղաղասիրութենէն: Թէ որ տեսնեն որ փողոցին մէջ երկու հոգի կեցեր կծեծկուին, փոխանակ հաշտեցընելու՝ կնային որ կռիւը աւելի ալ բոքբոքեն: Տան մը մէջ թէ որ սէր խաղաղութիւն տեսնեն, դժուարներուն կուգայ, կը ձանձրանան. խօսք կխառնեն որ կռիւ մը բացուի եւ իրենք զուարճանան: Ժողովրդեան մը մէջ թէ որ քանի մը տնուոր՝ քանի մը անձինք իրարու հետ սիրով տեսնուին ու քիչ մը սաւալ երթան ու գան մէկմէկու, կնային որ այն բարեկամութիւնը կերպով մը թշնամութիւն դառնայ, եւ իրենք զուարճանան:

Եթէ աքաղաղ եւ ուրիշ կենդանիներ իրարու հետ կռուեցընելը բարբարոսութիւն է, մարդկանց մէջ կռիւ ու թշնամութիւն ձգելը, կամ արդէն եղած թշնամութիւն մը աւելի գրգռելով սաստկացընելը՝ սատանայական ամբարշտութիւն է:



Աբաղաղներու կոխ.

Ն Ա Մ Ա Կ Ա Ռ Խ Մ Բ Ա Գ Ի Ր Ս.

Նիկոմիդիայի քով Սալանպէկ գեղաքաղաքէն ձիովէնեան Պ. Արմենակը գիր մը կգրէ մեզի, զոր արժան կհամարիմք ամբողջ հրատարակել:

Ինչ գանգատ որ կրնէ այն ընթերցասէր գրագետը իւր թղթին մէջ, եւ իրեն հետ ուրիշները, յուսամք թէ Մասեաց Աղաւնոյն եւս նոյնպէս չյարմարի՝ ինչպէս որ թերեւս յարմար կարծուի քանի մը լրագրաց եւ օրագրաց: Այսու ամենայնիւ մեր Աղաւնին ալ այս ազ-

դարարութենէն իւր բաժինը սիրով կընդունի, վասնզի արդէն միտքը դրած է այսուհետեւ աւելի կանոնաւոր կերպով, եւ աւելի անընդհատ կարգով հասնիլ իւր բաժանորդաց ձեռքը. մանաւանդ որ Տաճկաստանի Գործակալներէն նոր նոր խոստմունք առած է ճշդութեան եւ հոգացողութեան, եւ Ռուսաստանի բաժանորդացը ուղղակի պիտի երթայ՝ հասարակ նամակի պէս՝ տէրութեան թղթատարաց ձեռքովը: